

Աշխատուժի վերարտադրության կարգավորման հիմնախնդիրները դարեր շարունակ տեսամեթոդապես հղկվել են՝ ենթարկվելով փոփոխման տնտեսական համակարգերի և տնտեսակարգերի Էվոլյուցիոն «պտույտաշրջաններում»։ Դիցուք Հին Արեւելքում և Անտիկ աշխարհում հիմնախնդրի քննման առանցքը շաղախված էր ստրկատիրության ?մեղմ և դասական «Ֆենոմենային» դրսևորումներով։ Ետադարձ հայացքով արժեքավորմամբ կարելի է պնդել, որ այդ հարթությունում եւս տեղի էր ունենում «աշխատուժի» վերարտադրության գործընթաց, թեպետ իրապես այն ընթանում էր բնակչության վերարտադրության համահարթության մոտարկելի տիրույթում։ Հին Արեւելքում որպես հիմնական աշխատուժի դիտվող ստրուկների և հասարակ գյուղացիների վերարտադրության գործում մեծապես արդարացված էր բնական ճանապարհը։ Անտիկ հասարակարգում այդպիսի ուժային միջոցառումներն էին՝ պատերազմները, որպես արդյունք՝ այլ ազգերի ստրկացման գործընթացի խորացման հնարավորությամբ։ Թեեւ այս ամենին համընթաց խրախուսվում էր «Էլիտայի»՝ խոշոր ստրկատերերի ու փիլիսոփաների բնական վերարտադրության գործընթացը։ Միջնադարում Զրիստոնեության ազդեցության ընդլայնմամբ բնական վերարտադրությունը խարսխվում էր միակնության գաղափարին։ Հիմնախնդրի եկամտային ապահովման շերտը զուգակցվում էր Աստվածաշնչյան սկզբունքների յուրօրինակ մեկնաբանությամբ. «...հոգս մի՛ անեք ձեր կենսքի համար թե ի՞նչ պիտի ուտեք, եւ ի՞նչ պիտի խմեք. եւ ո՛չ ձեր մարմնի համար՝ թե ի՞նչ պիտի հագնեք։ ...Ուրեմն հոգս մի անեք ասելով, թե ի՞նչ պիտի ուտեմ, ի՞նչ պիտի խմեմ, կամ ի՞նչ պիտի հագնեմ։ Որովհետեւ այդ ամենը հեթանոսներն են խնդրում...»¹։ Իսլամական աշխարհում միեւնույն ժամանակահատվածում արդարացված բազմակնությունը՝ նպաստում էր բնակչության՝ բավական բարձր տեմպերով վերարտադրությանը։ Սակայն հիմնախնդրի շրջանակներում կանխարգելող գործոնի նշանակությամբ էր հանդես գալիս պատժի մեխանիզմի, դատական համակարգի գատ, ժողովրդի լայն շրջանակներին հասու դարձնելն ու մահվան կրոնական ընկալումը²։ Հասարակության, տնտեսական զարգացմամբ հիմնախնդրի կրոնացված, գաղափարախոսացված շերտի գտմամբ տեղի էին ունենում գիտական համակողմանի և շարունակական վերարժեքումներ։ Դիցուք՝ քաղաքատնտեսության գիտական կայացմամբ հիմնախնդրին առանձնահատուկ անդրադարձ կատարվեց մերկանտիլիստական առևտրատնտեսական համակարգի ձեւավորման ու զարգացման պարբերաշրջանում։ Այն կարեւորվեց Վ. Պետրի տեսությունում ևս։ Որոշակի առանձնահատկություններով հանդերձ, հիմնահարցին շարունակաբար անդրադառնում էին դասական քաղաքատնտեսության մասնագետները։ Այս առումով դասական քաղաքատնտեսության, այնուհետեւ դասական

տնտեսագիտության ներկայացուցիչները, զբաղված եւ «տնտեսապես ակտիվ» բնակչության միջեւ նույնության որոշակի նշան էին դնում։ Առանձին դեպքերում այս երկու փոփոխականները դիտվում էին հավասար մեծություններ։ Բացատրությունների շարքային տրամաբանությունն այնպիսին էր, թե տնտեսավարող սուբյեկտը հայտնվում է գործազուրկի կարգավիճակում միայն իր կամքով, եւ ավետում էին երկրում մշտապես լրիվ զբաղվածության ամկայություն։ *Բնակչության վերարտադրության հիմնախնդրում մեթոդաբանորեն առավել լայն ըմբռնմամբ՝ հիմնորոշ առանձնացվում էր աշխատավարձը, որպես նվազագույն կենսապայմանների ապահովման շեմ*։ Այս ամենը Թոմաս Ռ. Մալթուսի տեսությունում համատեղվում էր մարդու վերարտադրողական կարողությունների ֆիզիոլոգիական շերտին առնչվող հետազոտությամբ։ Սա ի վերջո վատտեսական գնահատականների և կապիտալի ճակատագրի գուժման ակնկալիք էր թելադրում։ Այն մեթոդաբանորեն դասական քաղաքատնտեսությունում հայտնի միկրոմակարդակում կատարված վերլուծության արդյունքների եզրագծում էր մակրոառնչություններում։ Մեթոդաբանական այս հնարքը տարակերպ դրսևորմամբ բազմիցս կկիրառվի աշխատուժի վերարտադրության վերլուծության տեսամեթոդական բազում հանգույցներում։ Ինչեւիցե, քննեք հիմնախնդրի մարքայան ըմբռնման ձեւաչափը եւ թանձրացված «կապիտալ» տեսությունում տվյալ կատեգորիայի (տեսամեթոդական) դիալեկտիկական։ Այնուամենայնիվ արձանագրենք, որ հիմնախնդրի ամբողջ բազմաշերտությունը քննվում է Կ. Մարքսի թանձրաբարդ տեսությունում։ Բացահայտելով կապիտալի կուտակման ընդհանրական օրենքը եւ շարադրելով «տնտեսական դինամիկ զարգացման ընդլայնված վերարտադրության» մոդելը՝ նա գալիս է այն եզրահանգման, որ անընդհատ կրճատվում է «զբաղված բնակչության» տեսակարար կշիռը, եւ ավելացման միտում է նկատվում չաշխատող բնակչության թվում։ Տեսամեթոդապես կատարվեց մեկ այլ շատ կարեւոր սահմանագատում ևս։ Առանձնացված տիրույթներում դիտարկվեց «աշխատանք», «աշխատանքային ունակություն»=«աշխատուժ» հասկացությունները։ Թեպետ այսպիսի տերմիններ տնտեսագետներն օգտագործել են մինչեւ Կ. Մարքսը։ Այսպես, Ա. Սմիթի «Ջետազոտություն ազգերի հարստության բնույթի եւ պատճառների մասին» աշխատության մեջ հանդիպում ենք՝ «ազատ աշխատողների աշխատանքի ունակություն», «աշխատողների ֆիզիկական ուժ», «արտադրողական աշխատուժ», «աշխատողների արտադրողական ուժեր»⁴։ Դ. Ռիկարդոյի մոտ հանդիպում ենք «աշխատուժ վարձող ձեռնարկատերեր» արտահայտությունը⁵։ Որպես քաղաքատնտեսական կատեգորիա՝ «աշխատուժի» բովանդակությունը բավական խորքային մեկնաբանում է Կ. Մարքսը։ Մասնավորապես խորհրդային տնտեսագետների աշխատություններում ընդգծվում է այն

ԱՆԽԱՏՈՒԺԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարգարիտա ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԵՊՅ
 տնտեսագիտության ֆակուլտետի տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու



Արման ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԵՊՅ
 տնտեսագիտության ֆակուլտետի տնտեսագիտության տեսության ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու



հանգամանքը, որ Կ. Մարքսին է պատկանում աշխատուժի և աշխատանքի՝ որպես աշխատուժի կիրառման պրոցեսի միջև տարբերության բացահայտումը:

Եթե աշխատավարձի սահմանումը, սմիթյան տեսության շրջանակներում, որոշվում էր նվազագույն մեծությամբ մեկ շնչի գոյության ապահովման հնարավորությամբ, ապա հասարակական ինքնագիտակցման խորացմամբ պայմանավորված՝ աշխատավարձի սահմանման աշխատուժի վերարտադրության գործում ներառվում էին «պատմական և բարոյական տարրեր»⁶: Այլևս աշխատավարձի մեծության սահմանումը անհրաժեշտաբար դիտարկվում է մարքսյան մոտեցմամբ համարժեք այն ապրանքների քանակությամբ, որն անհրաժեշտ է աշխատուժի և նրա ընտանիքի նորմալ վերարտադրության համար⁷: Այսօրինակ առաջնահերթությունների սահմանմամբ դիցուք ԽՍՀՄ-ում տրամադրվում էին անվճար կրթություն, հանգիստը կազմակերպելու անվճար ուղեգրեր, կատարվում էր բնակարանների հերթագրում, և տրամադրվում էին սոցիալական այլ արտոնություններ:

Վերոգրյալ ասպեկտների դիտարկմամբ և առաջնահերթությունների սահմանմամբ հարկ է նշել, որ խորհրդային տնտեսագիտությունում առկա սխուրաստիկան այսօր հնարավորություն է ընձեռում որոշակիություն մտցնել ժամանակակից տնտեսագիտության առանցքային կատեգորիաների բովանդակությունում: Մասնահատուկ 1980-90-ականների խորհրդային տնտեսագետների կողմից կատարվող ուսումնասիրություններում ևս հաճախ նույնացվում էին «աշխատուժի» և «բնակչության» վերարտադրության առաձևահատկությունները: Երբեմն՝ նույնիսկ աշխատուժի և բնակչության վերարտադրություն հասկացությունները: Թերեւս դա ոչ թե առանձին վերցրած մեթոդաբանական թերացում էր, այլ մի ողջ համակարգի ժողովրդագրական փոփոխությունների վերլուծության յուրօրինակ մեթոդաբանություն: Այժմյան մոտեցումները սկզբունքորեն այլ են: Հարկ է նշել, որ ԽՍՀՄ ժամանակահատվածում աշխատուժի վերարտադրության մշակված հաշվարկման եղանակը և տերմինաբանությունը ևս չէին ու չեն համապատասխանում միջազգային ստանդարտներին: Այս տեսանկյունից աշխատուժի քաղաքատնտեսական (մասնավորապես՝ տնտեսագիտական) կատեգորիա լինելու վերաբերյալ տեսակետները կարելի է տարանջատել երեք մասի.

- ✓ ըստ խորհրդային տնտեսագետների՝ աշխատուժն ինքնին քաղաքատնտեսական կատեգորիա չէ ոչ մի ֆորմացիայում,
- ✓ «աշխատուժի» կատեգորիա լինել-չլինելը պայմանավորված է արտադրությունում միջոցների հետ դրա միացման բնույթով,
- ✓ «աշխատուժը» կատեգորիա է բոլոր ֆորմացիաներում:

Առաջին տեսակետի կողմնակիցն է Ն. Կոլեսովը: Նա առանձնացնում է՝ թե «Աշխատուժն ինքնին տնտեսագիտական կատեգորիա չէ, այլ նման կատեգորիա են աշխատուժի նկատմամբ հարաբերությունները»⁸:

Երկրորդ տեսակետը հակված են պաշտպանել Ս. Բույենկոն, Ն. Տյակվինը: Նրանց հետազոտություններում աշխատուժը տնտեսագիտական կատեգորիա է միայն կապիտալիզմի և սոցիալիզմի ժամանակ⁹:

Այն թերեւս շրջանառվում է նաեւ «մարդու կենդանի արտադրողական ուժ» հասկացությամբ, ինչը նույնացվում, երբեմն հավասարեցվում էր «աշխատուժ» կատեգորիային: Սա նշանակում է մարդու աշխատելու ֆիզիկական և հոգեւոր կարողությունների ամբողջություն՝ ի տարբերություն մի կողմից աշխատանքի՝ որպես աշխատուժի կիրառում, մյուս կողմից՝ հենց մարդու՝ որպես անհատի այդ ունակության կրող: Կարծում ենք, որ խորհրդային քաղաքատնտեսությունում (որն ի դեպ զգալի տարբերվում է մարքսյան քաղաքատնտեսությունից) աշխատուժը որպես սոցիալիզմի տնտեսական կատեգորիա ժխտող տեսակետի հիմնական անորոշությունն ու թերացումն «իրական սոցիալիզմի» պայմաններում մարդկային գործունեության կարելուագույն կողմի՝ աշխատանքային գործունեությանը ոչ ապրանքային ձևի դասումն էր: Դա տեղի էր ունենում այսպես կոչված «հակամարտ ֆորմացիաներում» աշխատուժի վերարտադրության տնտեսական ձևի բացարձակացման

հետեւանքով: Արդյունքում՝ վերանում էր աշխատուժի վերարտադրության հիմնախնդիրը: Մեթոդաբանական անձեռնություն էր նաեւ այն, որ աշխատուժի, այսինքն՝ աշխատելու ունակությունը, նրանք թեկուզ մարքսիստական դիրքերից շփոթում էին դրա հասարակական տնտեսական ձևի հետ¹⁰: Հարկ է առանձնացնել, որ մեթոդապես այդպիսի տեսակետը ետադարձ արժեքվորմամբ միակողմանի է և պարզեցված: Զննարկումների այս տիրույթում անտեսվում է «աշխատուժ» կատեգորիայի պատմական սահմանները: Տվյալ պարագայում դր-կատելի են այն տնտեսագետների հետազոտությունները, որոնք դեռ 80-ականների սկզբին համարում էին, որ «աշխատուժ» կատեգորիան տեսանելի է և դեր ունի ցանկացած արտադրատեղանակի վերլուծությունում: Ավելին՝ նշվում էր, որ հարկ է տարբերել աշխատուժը՝ որպես աշխատելու ընդունակություն և դրա իրացումը¹¹: Վերոգրյալից բխում է, որ աշխատուժն արտադրության սուբյեկտիվ փոքրաթիվ գործուն է¹²: Սա նշանակում է, որ կարելի է համաձայնել այն փոքրաթիվ տնտեսագետներին, ովքեր 80-90-ականներին հիմնավորում էին աշխատուժի ապրանքային բնույթը սոցիալիզմի ժամանակ ու լինում մարքսյան այն դատողություններից, որ՝

- ✓ աշխատուժ կատեգորիան մարդկային հասարակության պատմական զարգացման արդյունք է,
- ✓ աշխատուժն ունի սոցիալ-տնտեսական կոնկրետ ձև,
- ✓ աշխատուժի ապրանքային ձևը Կ. Մարքսը կապում էր ապրանքային արտադրության համընդհանուր ձևի հետ,
- ✓ ապրանքափոռային հարաբերությունների պահպանումը սոցիալիստական վերարտադրության՝ արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման փուլերում հանգեցնում է այն բանին, որ կենսամիջոցների ֆոնդը ձեռք է բերում ապրանքային ձև:

1960-ականներից սկսած՝ աշխատուժի վերարտադրության հիմնահարցի շուրջ ձևավորվեց «մեխանիկական» մոտեցում: Աշխատուժի սոցիալիստական վերարտադրությունը դիտվում էր որպես աշխատուժի արտադրության բաշխման և սպառման (օգտագործման) հաջորդական փուլերի միասնությունն ընդգրկող գործընթաց: Տնտեսագետների մի մասի կարծիքով՝ աշխատուժի վերարտադրության փուլերը չի կարելի տարանջատել: Օրինակ՝ Վ.Ն. Յակիմովի կարծիքով, «սոցիալիզմի պայմաններում աշխատուժի վերարտադրության գործընթացը տարանջատվում է չորս մասի. կազմավորում-բաշխում-արտադրության միջոցների հետ անմիջական միացում-օգտագործում»¹³: Կարելի է նաեւ ընդդիմանալ այն տեսակետին, թե աշխատուժի վերարտադրության գործընթացի բովանդակությունը կազմում են դրա արտադրությունը, բաշխումը և սպառումը (օգտագործումը): Բացառելով փոխանակության փուլը, փորձ էր կատարվում ժխտել աշխատուժի ապրանքային ձևը: Ընդ է՝ այսպիսի մեթոդաբանական մոտեցումը գերիշխող էր 70-ականներին, սակայն ինտերգայով այն պահպանվեց մինչև «վերակառուցման» սկիզբը: Կարելու է այն, որ ապրանքափոռային հարաբերություններում աշխատուժը փոխանակության փուլի հետ կապված է լինում ոչ միայն այն պատճառով, որ գոյություն ունի ապրանքային արտադրություն, այլև այն բանով, որ ապրանքային արտադրությունը պայմանավորում է աշխատուժի վերարտադրության ծախսերի արժեքային ձևը (օրինակ՝ կենսամիջոցների ֆոնդի ապրանքային բնույթը): Այսպիսով, խնդրո առարկային վերաբերող՝ 80-ականների հիմնարար որոշ աղբյուրներում մեթոդաբանական հիմնական թերացումներ կարելի է առանձնացնել.

- ✓ աշխատուժի ապրանքային ձևի բացառումը,
 - ✓ չէր ընդունվում նաեւ այն, որ աշխատուժի վերարտադրությունը միասնական գործընթաց է՝ իր ամբողջական տեսքով:
- Իհարկե, չի կարելի ամբողջությամբ ժխտել նախորդ տնտեսագետների, մասնավորապես խորհրդային տնտեսագիտական դպրոցի ժառանգությունը, սակայն քննական վերլուծությունը հնարավորություն է տալիս նորովի վերաբծեցավորել այն:

Մասնավորապես, ինչպես արդեն նշեցինք, աշխատուժի վերարտադրության գործընթացն ընդգրկում է դրա արտադրությունը, բաշխումը և օգտագործումը (սպառումը)՝ ըստ խորհր-

դային (ոչ թե մարքայան) գրականությունում տեղ գտած «մեթոդաբանություն»։ Բնութագրելով «աշխատուժ» առանձնահատուկ ապրանքի մեծությունը կապիտալիզմի ժամանակ՝ Կ. Մարքսը միաժամանակ սահմանում է դրա վերարտադրության բնութագիրը՝ անհատական աշխատուժի վերարտադրություն, որպես աշխատուժի ծախսած կենսական ուժերի վերականգնում, որում կարելի էր աշխատուժի ծախսումների եւ փոխհատուցման աստիճանի հարաբերակցության հիմնախնդիրը։ Սակայն սոցիալ-տնտեսական նույնիսկ ամենաբարենպաստ պայմանները չեն կարող կանխել մարդկային կյանքի բնական ընթացքը։ «Տարիների ընթացքում, մահանալու հետեւանքով, շուկայից կրճատվող աշխատուժը պետք է շարունակ փոխարինվի առնվազն նույն թվաքանակի աշխատուժով»¹⁴։

Այսպիսով, աշխատանքի հասարակական բնույթի կամ հասարակական հավաքական ունակության աճը տեղի է ունենում ոչ միայն բանվորների եւ ծառայողների թվի ավելացման հաշվին։ Սա ապահովվում է մի կողմից աշխատողների ֆիզիկական զարգացմամբ եւ առողջապահական հիմնախնդիրների լուծմամբ, մյուս կողմից՝ նրանց գիտելիքի, արտադրական փորձի կուտակման եւ որակավորման բարձրացման հաշվին։ Դրանում էլ հենց ըողարկված հանդես է գալիս աշխատուժի վերարտադրության առաջին փուլի (արտադրության) նշանակությունը։

Միանշանակ է, որ աշխատուժի վերարտադրությունն ունի ինչպես քանակական, այնպես էլ որակական կողմեր։ Քանակական կողմը բնութագրվում է աշխատունակ բնակչության թվով, իսկ որակականը՝ աշխատողների ֆիզիկական ու մտավոր զարգացման եւ որակավորման վիճակով։ Միաժամանակ, աշխատուժի վերարտադրությունն իրագործվում է անմիջականորեն աշխատանքի, նյութական բարիքների ստեղծման գործընթացում, երբ տեղի է ունենում ոչ միայն աշխատուժի սպառում, այլեւ արտադրական փորձի, հմտության, գիտելիքի, մարդու ֆիզիկական եւ մտավոր հնարավորությունների կատարելագործում¹⁵։

Աշխատուժի վերարտադրության հաջորդ փուլը բաշխումն է, որտեղ աշխատուժի բաշխման փուլը նախորդում է հասարակական արդյունքի բաշխման փուլին՝ «... բաշխումը, արդյունքների բաշխում լինելուց առաջ, 1) արտադրության միջոցների բաշխում է եւ 2) որ նույն հարաբերության հետագա որոշումն է եւ հասարակության անդամների բաշխում է ըստ արտադրության տարբեր ձեւերի»¹⁶։ Աշխատուժի վերարտադրության «եզրափակիչ» փուլը դրա սպառումն է (օգտագործումը)։ Այդ փուլում, համաձայն 80-90-ականներին արդեն ամրագրված «խորհրդային քաղաքատնտեսության» մեթոդաբանության, աշխատանքի արդյունքի մեջ իր նյութական մարմնավորումն է ստանում այն ամենը, ինչ ձեռք է բերվել աշխատանքային ծախսումների հաշվին՝ աշխատուժի արտադրության եւ բաշխման փուլերում՝ «...ներգործելով իրենից դուրս գտնվող բնության վրա եւ այն փոփոխելով, նա միեւնույն ժամանակ փոփոխում է սեփական բնությունը»¹⁷։ Այդ փուլում տեղի է ունենում ոչ միայն աշխատուժի օգտագործում, այլեւ դրա որակական կատարելագործում, այսինքն՝ միաժամանակ դրա վերարտադրություն։ Առաջ անցնելով նշենք, որ նաեւ այս հանգամանքով է պայմանավորված արդեն 90-ականների սկզբներին աշխատուժի վերարտադրությանը փուլային մոտեցման արդարացի քննադատությունը եւ ընդհանուր տնտեսագիտությունում վերարտադրության մեթոդաբանության քննադատությունը (reproduction)։

Աշխատուժի սպառման փուլը ինչպես հայտնի է, միաժամանակ նաեւ աշխատանքի գործընթաց է եւ դրա հետեւանքով համընկնում է նյութական արդյունքի արտադրության փուլին։ Մարքսյան մեթոդաբանության համաձայն՝ նյութական արտադրությունը հասարակական վերարտադրության մյուս փուլերի նկատմամբ որոշիչ փուլ է։ Կախված այն հանգամանքից, որ աշխատուժի վերարտադրության փուլերը չեն համընկնում նյութական արդյունքի համապատասխան փուլերին, աշխատուժի վերարտադրության դիալեկտիկական տարբերվում է նյութական վերարտադրության փուլերի դիալեկտիկայից։ Ցավոք, նույնիսկ այդ համատեքստում, զգալի թիվ կազմող 80-ական-

ների տնտեսագետներն ունեին մեթոդաբանական այն մոտեցումը, ըստ որի՝ որոշիչ նշանակություն էր տրվում դրա այս կամ այն փուլին։ Համամիտ չլինելով նշված կարծիքներին՝ նշենք, որ արտադրության փուլի՝ մյուս փուլերի նկատմամբ առաջնայնության մարքսյան ըմբռնումը ենթադրում էր միայն ամբողջությամբ վերցրած հասարակական վերարտադրությունը եւ ոչ թե աշխատանքի վերարտադրությունը։

1. Աստուածաշունչ, Մատենա Յին եւ Նոր Կտակարանների, Երրայական եւ Յունական բնագիրներից թարգմանուած, Թեհրան, Աւետարան ըստ Մատթեոսի, Գլուխ 2, էջ 1091-1092
2. Коран, Пер. И.Ю. Крачковского, Ростов-на-Дону: Феникс, Издание третье, 2003, с. 64 - 84.
3. Տես՝ Լույսը
4. А. Смит, Исследование о природе и причинах богатства народов, М. 1962, с. 72, 74, 246, 253.
5. Д. Рикардо, Сочинения, Т. 1, М. 1955, с. 180-181.
6. Կ. Մարքս, Կապիտալ, հատոր 1, Երեւան 1954, էջ 182
7. Երեւույթը հետագայում առավել խորացված կարտահայտվի ետարդյունաբերական հասարակարգում, որտեղ աշխատավարձի սահմանման ժամանակ միանշանակ կկարելի վերարտադրության հիմնահարցի շրջանակներում ընտանիքի եւ ընդհանրապես սոցիալ-հոգեբանական գործոնների դերը։ Թեպետ այլեւս աշխատուժի վերարտադրությունը կզտվի բնակչության վերարտադրության հնարավոր նույնացումից։
- Մեկ եակն մեջբերում եւս՝ մասնագիտական հարթությունում աշխատանք կատարելու ունակությունը դիտվում է ֆիզիկական ու մտավոր աշխատանք կատարելու ամբողջական համակարգում։ Սակայն ետարդյունաբերական հասարակարգում մտավոր աշխատանքային ունակությունը տրոհվում է բազում մասերի՝ նախապատրաստական (ծրագրավորում, նպատակների սահմանում, իրականացում եւ այլն), կառավարման (տեխնոլոգիական գործընթացի վերահսկում եւ կարգավորում), հաշվիչ-տրամաբանական, ճարտարագիտակոնստրուկտորական եւ գիտական, վարչական եւ այլն։
8. Տես՝ Вопросы экономики, 1973, #7, с. 85.
9. Տես՝ Н. К. Трякин, О рабочей силе при социализме, Вопросы экономики, 1979, #5, с. 105.
10. И.А. Ягодкина, Воспроизводство рабочей силы при социализме, М. 1984, #5, с. 13.
11. И.Ф. Сорокина, Особенности воспроизводства рабочей силы в условиях развитого социализма, М. 1984, #5, с. 13.
12. Տես՝ Կ. Մարքս, Կապիտալ, Գ. 1, էջ 188
13. Տես՝ В.Н. Якимов, Закономерности воспроизводства рабочей силы при социализме (автореферат), Чебоксары 1972, #5, с. 14.
14. Կ. Մարքս, Կապիտալ, Գ. 1, էջ 182
15. И.И. Кузьминов, Очерки политической экономии, М. 1982, с. 240-241; Е.Л. Маневич, Вопросы труда в СССР, М. 1980;
- Գ.Ե. Սկրտչյան, Աշխատուժի սեփականությունը սոցիալիզմի ժամանակ, Հայաստանի ժող. տնտեսություն, 1983, #11, էջ 31.
- Կ.Ա. Կորեդյան, ՀՍՍՀ աշխատանքային ռեսուրսների օգտագործումը արդի փուլում, էջ 27-32.
- Գր.Ե. Կիրակոսյան, Աշխատուժի ծախսերի փոխհատուցման ձեւերը սոցիալիզմի պայմաններում, Երեւան 1980
16. К. Маркс, Ф. Энгельс, Т. 12, с. 722.
17. Կ. Մարքս, Կապիտալ, Գ. 1, էջ 188